ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան **« 13 » հունիսի 2024թ.**

ՀՐԱՄԱՆ № 042-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի Հ-17/2020 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 25-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու, ինչպես նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 28-ի 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 02-Ա որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի 2020 թվականի օգոստոսի 28-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու վերաբերյալ» Հ-17/2020 հրամանը:

2. Հաստատել Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները՝

1) Հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչությանը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչությանը՝ համաձայն հավելված 2-ի,

3) Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությանը՝ համաձայն հավելված 3-ի,

4) Հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությանը՝ համաձայն հավելված 4-ի,

5) Հանձնաժողովի մեթոդական աջակցության վարչությանը՝ համաձայն հավելված 5-ի,

6) Հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությանը՝ համաձայն հավելված 6-ի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ